ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՍԻՐԻԱՆ XII ԴԱՐԻ 40—70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

1144 թ. դեկտեմբերի 24-ին Մոսուլի աթաբեկ Իմադ ալ-Դին Զանգիի բանակը գրավեց Արևելքում խաչակիրների հաստատած առաջին իշխանության՝ Եդեսիայի կոմսության մայրաքաղաք Եդեսիան[1]։ Դա սկիզբ դրեց Եդեսիայի կոմսության ողջ տարածքի նվաճմանը։ Զանգիների և Իկոնիայի սելջուկների ձեռքն ընկան Վերին Միջագետքն ու Եփրատացիք նահանգը՝ իրենց բոլոր քաղաքներով ու ամրոցներով։ Եդեսիայի գրավումը միաժամանակ նշանավորում էր մահմեդական տիրույթներում անիշխանության ու մասնատվածության ավարտը և Արևելքում ուժերի մոտավոր հավասարակշռության հաստատումը խաչակիրների և մահմեդականների միջև։ Թեև նախաձեռնությունն արդեն անդառնալիորեն անցել էր վերջիններիս։

1146 թ. Իմադ ալ-Դին Զանգիի մահից հետո, նրա որդին՝ Նուր ալ-Դին Մահմուդ իբն Զանգին ժառանգեց Մոսուլի աթաբեկության արևմտյան տիրույթները (Հյուսիսային Սիրիա)։ Մոսուլը բաժին հասավ եղբորը՝ Սայֆ ալ-Դինին։ Նուր ալ-Դինը, մոտ երեսուն տարի գտնվելով գրեթե անընդհատ պատերազմների մեջ, Հյուսիսային Սիրիայի տարածքն ընդգրկող ամիրությունը վերածեց մի ընդարձակ պետության[2]։

Նուր ալ-Դինի գահակալման ժամանակաշրջանը՝ 1146—1174, գրեթե համընկավ Կիլիկիայի երկու իշխանապետերի՝ Թորոս II-ի (1145—1169) և նրա եղբոր՝ Մլեհի (1170—1175) իշխանության տարիներին։ Սա Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնման, նրա հողերի ազատագրման և Ռուբինյան իշխանության ամրապնդման ժամանակաշրջանն էր, որը համընկավ Արևելքում տեղի ունեցած վերոհիշյալ իրադարձություններին և անկասկած, այս կամ այն չափով կապված էր դրանց հետ։

Թե՛ Թորոս II-ը և թե՛ Մլեհը Կիլիկյան Հայաստանի նշանավոր պետական գործիչներ էին։ Երկու եղբայրներն էլ աչքի ընկան ոչ միայն որպես քաջ զորավարներ, այլև որպես հմուտ դիվանագետներ։ Մի բան, որ չափազանց կարևոր էր բոլոր կողմերից գիշատիչ պետություններով շրջապատված Կիլիկիայի համար։

Եթե Թորոս II-ը հռչակվեց նրանով, որ նախ վերականգնեց կործանված իշխանությունը, իսկ հետո հաջող կերպով պաշտպանեց այն բյուզանդական հզոր բանակների հարձակումներից[3], ապա Մլեհը աչքի ընկավ իր նուրբ և հեռատես դիվանագիտությամբ։ Նա, ճիշտ կողմնորոշվելով ժամանակի քաղաքական բարդ իրավիճակում, չխորշեց դաշնակցել մահմեդական տիրակալի՝ Նուր ալ-Դինի հետ[4]։ Մի բան, որն իր նախորինակը չունի Կիլիկյան Հա-

---

[1] N. Elisseff. Nur ad-Din. T. II, Damas, 1967, p. 380.

[2] *Տե՛ս նույն տեղում։*

[3] Chronique de Michel le Syrien. T. III, Bruxelles, 1963, p. 311; Никиты Хониата. История. Т. I, С.-Петербург, 1860, с. 129—130; Г. Г. Микаелян. История Киликийского Армянского государства. Ереван, 1952, с. 110—126. *Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, Երևան, 1976, էջ 681—683։*

[4] *Մատթեոս Սարաստեցի. Տարեգիրք, Փարիզ, 1869, էջ 99—102։* Chronique de Michel le Syrien, p. 331. *Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, էջ 683—684։* Г. Г. Микаелян. Указ. соч., с. 126—130.

յաստանի պատմության մեջ, թեև հայտնի են մահմեդականների հետ հայերի համագործակցության առանձին դեպքեր։

* * *

Դեռևս 1137-ին, Հովհաննես Կոմնենոս կայսեր հայտնի արշավանքից հետո, Բյուզանդական կայսրությունը վերականգնել էր իր գերիշխանությունը Կիլիկիայի և Անտիոքի վրա։ Բայց բյուզանդական նվաճումն անկայուն էր, և կայսրը իր գահակալության վերջում (1142 թ.) ստիպված էր ևս մի արշավանք ձեռնարկել դեպի Արևելք, որի նպատակը, ըստ դեպքերին ժամանակակից բյուզանդացի պատմիչ Նիկետաս Խոնիատեսի, Հայաստանի գործերի կարգավորումը և իր նախորդ արշավանքի ժամանակ նվաճած քաղաքների ու ամրոցների հավատարմության ապահովումն էր[6]։ Բայց կայսրը չի գնում Լեռնային Կիլիկիա, այլ շարժվում է դեպի Անտիոք, այդպես էլ չապահովելով «քաղաքների ու ամրոցների հավատարմությունը»[6]։ Այդ է պատճառը, որ երբ Հովհաննես Կոմնենոսի կողմից գերված Լևոն իշխանապետի որդի Թորոսը փախավ բյուզանդական գերությունից ու վերադարձավ Կիլիկիա, կարողացավ կարճ ժամանակամիջոցում, հենվելով հայ բնակչության վրա, վերականգնել Ռուբինյան իշխանությունը (1145 թ.)։

Յոթ տարի անց՝ 1152-ին, Թորոս II-ը, հայկական բանակի գլուխ անցած ջախջախեց բյուզանդական տիրապետությունը վերականգնելու նպատակով Կիլիկիա ներխուժած Անդրոնիկոս զորավարի բանակը։

Այդ ընթացքում Ռուբինյան իշխանության արտաքին քաղաքականության մեջ կարևոր դեր սկսեցին խաղալ երկու հզոր հարևաններ՝ Իկոնիայի սուլթան Մասուդը և Հալեպի տեր Նուր ալ-Դինը։ Սրանք իրենց մեջ բաժան-բաժան արեցին նախկին Եդեսիայի կոմսության հողերը։ Մասուդը տեր դարձավ Մարաշին, Քեսունին, Ռաբանին, Մարզուբանին, Այնթաբին և Տլուքին, իսկ Նուր ալ-Դինը, գրավելով Գուրոսը, Ազազը, Ռավանդանը, Թել Բաշիրը (Թլպաշար), Թել Խալիդը, Հիսն Կարդինը և ալ-Ջաուզ գետի գավառը, գրեթե սահմանակից դարձավ Կիլիկիայի հայկական իշխանապետությանը, սպառնալով ոչ միայն նրա, այլև խաչակրաց պետությունների ամբողջականության։

Նուր ալ-Դինին դիմագրավելու համար Երուսաղեմի թագավորը իր բանակով 1158-ին շարժվեց հյուսիս՝ դեպի Անտիոք, որտեղից սուրհանդակներ ուղարկեց «Թորոսի, մի շատ հզոր հայ իշխանի»[7] մոտ, նրան բարեկամաբար հրավիրելով մասնակցել իր արշավանքին։ Ըստ Գիյոմ Տյուրոսցու, «Թորոսը պատրաստակամությամբ ընդունեց հրավերը։ Վճռական ու եռանդուն այդ մարդը անմիջապես մի մեծ բանակ հավաքեց և արագ շարժվեց դեպի Անտիոք»[8]։ Թորոսի գլխավորությամբ հայկական բանակի տեղ հասնելուն պես միացյալ զորքը հարձակվեց Որոնտես գետի ափին գտնվող Զանգիների Շայզար նշանավոր ամրոցի վրա (Կենտրոնական Սիրիա)։ Կարճատև պաշարումից հետո ամրոցը գրավվեց[9]։ Նուր ալ-Դինի որևէ պատասխան գործողության մասին աղբյուրը ոչինչ չի հաղորդում։

Նուր ալ-Դինի ստեղծած սպառնալիքի դեմ Ռուբինյանների և Անտիոքի իշխանության կնքած դաշինքին միացավ նաև Բյուզանդական կայսրությունը, հավանաբար համոզված լինելով, որ հիշյալ ամիրությունը հետագայում

---

[5] Никиты Хониата История. Т. I, с. 129—130; Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, էջ 680, 681։

[6] Никиты Хониата История, с. 175—177.

[7] A History of Deeds Done Beyond the Sea, by William Archbishop of Tyre. Tr. by Babcock and Krey. Vol. I, New York, 1943, p. 265.

[8] Նույն տեղում, էջ 265—266։

[9] Նույն տեղում։

կարող է սպառնալ նաև իրեն։ Մանուել Կոմնենոս կայսրը, նույնիսկ անտեսելով այն հանգամանքը, որ Անտիոքի Ռեյնալդ իշխանը Թորոս II-ի համագործակցությամբ ասպատակել էր Բյուզանդիային պատկանող Կիպրոս կղզին, միացավ նրանց[10]։ Երուսաղեմի թագավոր Բալդուինը, որը մեծապես շահագրգռված էր Անտիոքի և Կիլիկիայի զինակցությամբ Նուր ալ-Դինի դեմ պայքարելու համար, եռանդուն կերպով միջնորդեց և նպաստեց նրանց հաշտությանը։

Այնուհետև կայսրը երկու իշխանների և Երուսաղեմի թագավորի հետ ռազմական դաշինք կնքեց ընդդեմ օրեցօր հզորացող Նուր ալ-Դինի։ Դեպքերին ժամանակակից հայ պատմիչ Գրիգոր Երեցը այդ առթիվ գրում է. «Յետայսորիկ խորհուրդ բարի ի մէջ առեալ թագաւորքն[11] և անյաղթելի զօրք փրերացն[12], տէրն Անտիոքու և Թորոս, միահամուռն ազգ քրիստոնէիցն հաւատովք և ջերմեռանդն սրտիւ միաբանեալ կամ մեռանիլ և կամ փրկել զանզերծանելի գերեալսն ի բազում ժամանակաց յարիւնաշէն քաղաքէն Հալպայ և Դմշկայ»[13]։

Սակայն միացյալ արշավանքը մահմեդական Սիրիայի վրա չկայացավ։ Լսելով, որ Կոստանդնուպոլսում գահի դեմ խռովություն է ծագել, կայսրը վերադարձավ մայրաքաղաք։ Նրա հեռանալուց հետո (1159) Նուր ալ-Դինի սպառնալիքը խաչակիրների և Կիլիկիայի նկատմամբ ավելի շոշափելի դարձավ[14]։ Այս տարիներին մեկը մյուսի ետևից ստեղծվեցին մի շարք անկայուն ռազմական դաշինքներ, ուղղված այս կամ այն մեծ պետության դեմ, բայց դրանք շուտով քայքայվում էին, այդպես էլ ոչ մի իրական արդյունքի չհասնելով։ Այդպես քայքայվեց վերոհիշյալ Բյուզանդիա—Կիլիկիա—խաչակիրներ դաշինքը ընդդեմ Նուր ալ-Դինի։ Դրան անմիջապես հաջորդեց նույնքան անպտուղ ևս մի հակազանդիական դաշինք՝ Իկոնիա—Կիլիկիա—խաչակիրներ[15]։

Ի վերջո, Մանուել Կոմնենոս կայսրը ոչ միայն հաշտություն կնքեց իր երեկվա թշնամու՝ Նուր ալ-Դինի հետ (1159), այլև կարողացավ նրան դուրս բերել կայսրության համար շատ ավելի մոտ թշնամու՝ Իկոնիայի Կըլըչ Արսլան II-ի դեմ, որն անընդհատ սպառնում էր բյուզանդական սահմաններին։ Հաշտության հաջորդ տարում՝ 1160-ին Նուր ալ-Դինը պատերազմ սկսեց Իկոնիայի դեմ։ Նա գրավեց Ռաբանը, Քեսունը, Բեհեսնին և Մարաշը։ Կըլըչ Արսլանը միայն զիջումների գնով կարողացավ հաշտություն կնքել Նուր ալ-Դինի և Բյուզանդիայի հետ[16]։ Այսպիսով, մեծ մասամբ հայաբնակ վերոհիշյալ հողերը միացվեցին Նուր ալ-Դինի պետությանը։ Նա Ռուբինյաններին սահմանակից դարձավ նաև արևելյան կողմից, անմիջական սպառնալիք ստեղծելով Կիլիկյան Հայաստանի ինքնուրույնությանը։ Հայերն ու խաչակիրները, դաշինքներով կապված լինելով թե՛ Բյուզանդիայի և թե՛ Իկոնիայի սելջուկների հետ, սպասողական դիրք գրավեցին և հիշյալ պատերազմին չմասնակցեցին։

Նվաճման վտանգը կախված էր նաև Բյուզանդիային պատկանող Դաշտային Կիլիկիայի վրա։ Ահա թե ինչու Բյուզանդիան ևս մեկ անգամ փոխեց իր քաղաքական դիրքորոշումը՝ խաչակիրների ու հայերի հետ մեկտեղ կրկին հանդես գալով ընդդեմ Հալեպի տիրակալի։ 1164 թ. օգոստոսի 11-ին Անտիոքից արևելք գտնվող Հարիմ բնակավայրի մոտ Դաշտային Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կոստանդին Կալոմանը, Անտիոքի իշխան Բոհեմունդը, Տրիպոլսի դուքս Ռայմոնդը, Թորոս II-ն ու իր եղբայր Մլեհը ճակատա-

---

10 Г. Г. Микаелян. Указ. соч., с. 120.

11 Նկատի ունի բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսին և Երուսաղեմի թագավոր Բալդուինին։

12 Նկատի ունի Հյուրընկալ և Տաճարական ասպետներին։

13 Մատթեոս Ուռհայեցի. ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 419—421։

14 Г. Г. Микаелян. Указ. соч., с. 124.

15 Մատթեոս Ուռհայեցի, էջ 413։

16 C. Cahen. La Syrie du Nord a l'époque des Croisades et la principauté franque d'Antioche. Paris, 1940, p. 403—404.

մարտ տվեցին ընդդեմ Նուր ալ-Դինի, որն ավարտվեց վերջինիս հաղթանակով։ Գերությունից կարողացան խուսափել միայն Թորոսն ու Մլեհը, որոնք վերադարձան Կիլիկիա[17]։

Հարիմի ճակատամարտին հաջորդած իրադարձությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Միքայել Ասորի պատմիչը։ Ըստ նրա, նույն 1164-ին Թորոսը միջոցներ ձեռնարկեց հիշյալ ճակատամարտում գերի ընկած հայ զինվորներին ազատելու համար։ Նա բանակցություններ մեջ մտավ Նուր ալ-Դինի հետ, բայց Սիրիայի տիրակալը մերժեց վերադարձնել գերիներին։ Որոշ ժամանակ անց, օգտվելով այն բանից, որ Նուր ալ-Դինը Հարավային Սիրիայում գրոհում էր ֆրանկների Բանիյաս ամրոցը, Թորոսը հարձակվեց Սիրիայից կախման մեջ գտնվող Մարաշի գավառի վրա։ Այստեղ նա մոտավորապես չորս հարյուր գերի վերցրեց, այդ թվում Մարաշի շրջանում կանգ առած Ջանդիների բանակի թուրքական ջոկատներին, այնուհետև սպառնաց նրանց կոտորել, եթե իր պահանջը չբավարարվի։ Նուր ալ-Դինը, չցանկանալով Թորոսի հետ բախվել, համաձայնեց սկսել գերիների փոխանակությունը[18]։

Հարիմի ճակատամարտից հետո քրիստոնյաների վիճակը շատ ավելի ծանր կդառնար, եթե Նուր ալ-Դինը իր ուշադրությունը չդարձներ դեպի հարավ՝ Եգիպտոս, որտեղ Ֆաթիմյանների թուլացումից օգտվելով, փորձում էին իրենց ազդեցությունը տարածել թե՛ Երուսաղեմի թագավորությունը և թե՛ Զանգիները[19]։ Այդ ժամանակ Նուր ալ-Դինի համար այնքան կարևոր էին Եգիպտոսի գործերը, որ նա, հյուսիսից իր թիկունքը հնարավոր հարձակումներից ապահովելու համար, Կըլըչ Արսլանին վերադարձրեց (1166 կամ 1167 թ.) Բեհիսնին, Քեսունը, Մարաշը և, բացի այդ, իր խաղաղասիրական տրամադրությունները հավաստեց Բյուզանդիային, գերությունից ազատելով բյուզանդական դուկ Կոստանդին Կալոմանին և Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ին[20]։

XII դարի 60-ական թթ. վերջին Կիլիկիայի իշխանապետ Թորոս II-ի և իր եղբոր՝ Մլեհի հարաբերությունները բավական սրվեցին։ Մլեհը ամեն գնով՝ ձգտում էր տիրանալ եղբոր իշխանությանը, չխորշելով անգամ նրան սպանելու նպատակով դավադրություն նյութել։ Դավադրությունը բացահայտվեց, և Թորոս II-ը ստիպված էր եղբորը արտաքսել երկրից[21]։ Մլեհը գնաց Հալեպ և ծառայության մտավ Նուր ալ-Դինի մոտ, նրանից որպես ավատական տիրույթ ստանալով Կյուրոս կամ Գուրոս քաղաքն ու գավառը[22], որը գտնվում էր Այնթաբից հարավ-արևմուտք և Կիլիկիայից բաժանված էր միայն Ամանոսյան լեռներով։ Այն, միաժամանակ, Հալեպ—Այաս առևտրական ճանապարհի վրա գտնվող կարևոր կենտրոններից մեկն էր[23]։

---

[17] Abu Shama. Des Deux Jardins, Recueil des Hist. des Croisades —Historiens Orientaux, t. IV, Paris, p. 108—109; Kamal ad-Din Ibn al-Adim. Histoire d'Alep. Damas, 1951, p. 319; William of Tyre. V. I, p. 307—308. S. Runciman. A History of the Crusades. V. II, Cambridge. 1952, p. 369; Ղ. Ալիշան. Սիսուան. Վենետիկ. 1885, էջ 55։

[18] Chronique de Michel le Syrien. T. III. p. 326.

[19] C. Cahen. La Syrie du Nord..., p. 409.

[20] Նույն տեղում, էջ 411։

[21] Մասուէլ քահանա Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 135։

[22] Սմբատ Սպարապետ. Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 167։

[23] Ղ. Ալիշան. Նշվ. աշխ., էջ 56։ Այս Գուրոսը, որ լավ ամրացված քաղաք էր, մի ժամանակ պատկանում էր Գող Վասիլի եղբայր Բագրատին, բայց Բալդուին գը Բուրգը խլել էր այն հայ իշխանից, միացնելով Եդեսիայի կոմսությանը։ Այս, ըստ երևույթին, հայաբնակ քաղաքն ու գավառը 1151—1152 թթ., ի շարս այլ վայրերի, անցավ Նուր ալ-Դինին, որն էլ այն հանձնեց Մլեհին, որպես կալված (տե՛ս Г. Г. Микаелян. Указ. соч., с. 79)։

1169 թ. վախճանվեց Թորոս II-ը, իրեն հաջորդ թողնելով մանկահասակ որդուն՝ Ռուբեն II-ին խնամակալությամբ Թոմաս պայլի[24]։ Նրբոր մահվան լուրը լսելով, Մլեհը Նուր ալ-Դինից ստացած օգնական զորաջոկատով մտավ Կիլիկիա և տիրացավ իշխանությանը (1170 թ.)[25]։ Հենց այդ պահից նա դադարեց Նուր ալ-Դինի վասալը լինելուց և վերածվեց նրա դաշնակցի։ Այն բոլոր հողերը, որ հետագայում, վերոհիշյալ օգնական զորաջոկատի օգնությամբ, Մլեհը գրավեց հույներից և խաչակիրներից, նա միացրեց իր իշխանապետությանը։

Մլեհի արտաքին քաղաքականության մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում բյուզանդացի պատմիչ Հովհաննես Կինամոսը. «Բերրիայի սատրապ Նուրադինը, Լիկաոնիայի հեգեմոն սուլթանը, Հայոց իշխան Մլեհը և Անկյուրացոց և մյուս Գաղատիայի արխոնտը համաձայնության եկան հռոմայեցվոց վրա արշավելու մասին»[26] (թարգմ. Հ. Բարթիկյանի)։

Ինչպես երևում է պատմիչի հաղորդումից, բացի Նուր ալ-Դինից, Լիկաոնիայի, կամ որ նույնն է Իկոնիայի սուլթանից և Մլեհ իշխանապետից, հակաբյուզանդական դաշինքի մասնակիցների մեջ էր նաև «Անկյուրացոց և մյուս Գաղատիայի արխոնտը», որն ամենայն հավանականությամբ Դանիշմանյան տիրակալն էր։ Մլեհի դաշնակցությունը հարևան երեք մահմեդական պետությունների հետ (Զանգիների պետություն, Իկոնիայի սուլթանություն, Դանիշմանյան ամիրություն), ապահով էր դարձնում Ռուբինյան իշխանապետության սահմանների մեծագույն մասը և միաժամանակ հզոր հենարան էր Բյուզանդական կայսրության դեմ պայքարում։

Հենվելով Նուր ալ-Դինի տրամադրած օգնության վրա, Մլեհը 1173-ին վրճռական հաղթանակ է տանում բյուզանդական զորավարներ Միքայել Վռանասի, Կոստանդին Ծվփորպեի և Կոստանդին Կալոմանի գլխավորած կայսերական բանակի դեմ և ազատագրում Դաշտային Կիլիկիայի մեծ մասը[27]։ Մլեհի տարած հաղթանակի կարևորությունը երևում է արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի տեղեկություններից։ Նա նախ գրում է, թե ինչպես Նուր ալ-Դինը օգտագործեց Մլեհին իր հավատակիցների դեմ պայքարում, դրանով իսկ ազատելով իր զորքի մի մասը հարևան երկրների վրա հարձակվելու պարտականությունից[28]։ Ապա շարունակում է. «Սակայն Մլեհն էլ իր հերթին հենվում էր Նուր ալ-Դինի վրա դրացի հայերի[29] և հռոմների դեմ [պայքարելու համար]։ Ադանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները Կոստանդնուպոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետև դրանք իր երկրին հարևան էին։ Ռումի թագավորը մեծ զորք ուղարկեց նրա դեմ, [հրամանատար] նշանակելով իրեն ազգական մի քանի հայտնի պատրիկների։ Մլեհը Նուր ալ-Դինի զորքերի հետ նրանց դեմ դուրս եկավ պատերազմի և համառ կռվից հետո հռոմները պարտվեցին, շատերն սպանվեցին ու գերի ընկան։ Մլեհի ուժն ավելացավ, իսկ հռոմներն իրենց հույսը կտրեցին այդ երկրից։ Մլեհը Նուր ալ-Դինին ուղարկեց իր ավարի զգալի մասը և երեսուն հոգի [հռոմների] նշանավոր ու երևելի մարդկանցից։ Նուր ալ-Դինը սրա մի մասը ուղարկեց ալ-Մուստադի Բիամր-Իլլահ խալիֆային և գրեց նրան, հպարտանալով ձեռք բեր-

---

24 Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, էջ 683։

25 Chronique de Michel le Syrien, p. 331; William of Tyre. V. I, p. 386—387.

26 Recueil des Historiens des Croisades, Historiens Grecs. T. I, Paris, 1875, p. 312.

27 Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 57։

28 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. II. Արաբական աղբյուրներ. 2, Իբն ալ-Ասիր, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1981, էջ 262—263։

29 Նկատի ունի Լամբրոնի հայ իշխաններին, որոնք Բյուզանդիայի վասալներն էին (տե՛ս Г. Г. Микаелян. Указ. соч., с. 128)։

ված հաղթանակով [որպես իրենը ներկայացնելով]», քանի որ իր զինվորներն էլ էին այն իրագործել»[30]։

Մի այլ տեղում Իբն ալ-Ասիրը գովերգում է մահմեդական տիրակալին, նշելով, որ հայ իշխանին սիրաշահելը և նրան ընդդեմ ֆրանկների օգտագործելը վկայում էր Նուր ալ-Դինի հնարամտության և խորամանկության մասին։ Մինչդեռ մի այլ աղբյուր՝ XIV դարի պատմիչ ալ-Զահաբին բոլորովին տարբեր կարծիք է հայտնում։ Նա գրում է. «Նուր ալ-Դինը, այս իշխանի խորամտությամբ ու աննկուն բնավորությամբ հիացած, նրա մեջ տեսնում էր մի դաշնակցի՝ ֆրանկների դեմ պատերազմում։ Նա նրան տվեց Սսի երկրի հողերը, որպես կալված, ասելով,—Նա կռվում է յուրայիններ դեմ և մի պատնեշ է, որ կդիմադրի Կոստանդնուպոլսի կայսրին»։ Աբբա արաբ պատմիչը շարունակում է. «Բայց հոռոմների դեմ իր տարած հաղթանակից հետո Մլեհը հանդգնեց պաշտպանական ամրություններով ամրացնել Սսի երկիրը՝ [Մլեհի հանդեպ] Նուր ալ-Դինի տածած չափից ավելի վստահությունը նրա թույլ տված սակավ սխալներից մեկն էր։ Աստծու ողորմածությունը նրա վրա»[31]։

Այս համագործակցությունը, իրոք, ավելի օգուտ բերեց Կիլիկիային։ Ճիշտ է, Մլեհը մի պատնեշ էր Նուր ալ-Դինի և Բյուզանդիայի միջև, սակայն հետագայում նա, հենվելով Նուր ալ-Դինի վրա, հասավ իր համար կենսական մի քանի հարցերի լուծմանը։ Նախ հույներից ազատագրեց Կիլիկիայի երեք մեծ քաղաքները՝ Տարսոնը, Ադանան ու Մամեստիան։ Ապա նաև, օգտվելով Նուր ալ-Դինի հարվածների հետևանքով խաչակիրների թուլանալուց, Ամանոսյան լեռներում տեր դարձավ Տաճարականների տիրույթներին, մասնավորապես Բաղրաս կամ Գաստոն ամրոցին, որը կարևոր ռազմագիտական դիրք ուներ Կիլիկիայի և Անտիոքի իշխանության սահմանագլխին։

Դեպքերի այսպիսի ընթացքը չափազանց վտանգավոր էր խաչակիրների համար։

Այն բանից հետո, երբ Զանգիների գլխավորությամբ սկսեց ձևավորվել մահմեդական ընդհանուր ճակատ ընդդեմ խաչակիրների, վերջիններս փորձում էին նույնպիսի միացյալ ճակատ ստեղծել քրիստոնյա պետություններից։ Ու թեև մինչ այդ խաչակիրները ավելի նպաստել էին հայկական իշխանությունների կործանմանը, քան նրանց որևէ էական օգնություն ցույց տվել, Մլեհի բռնած դիրքը նրանց կողմից համարվեց դավաճանություն և տրամադրությունները նրա հանդեպ լարված էին։

Ի վերջո, 1173-ին Անտիոքի Բոհեմունդ III-ի խնդրանքով, Երուսաղեմի թագավոր Ամալրիկը կազմակերպեց մի արշավանք դեպի Կիլիկիա։ Բայց Նուր ալ-Դինը, որպես Մլեհի դաշնակից, մի ռազմարշավ կազմակերպեց Կարակից վերև (Պաղեստին), որով ստիպեց Երուսաղեմի թագավորին ընդհատել արշավանքը դեպի Կիլիկիա[32]։

Նուր ալ-Դինի մահից հետո (1174) Մլեհը իշխեց մեկ տարի։ Նա, մահմեդականների հետ դաշնակցելու, նաև իր խիստ նեղքին քաղաքականության պատճառով Կիլիկիայում ուներ բազմաթիվ հակառակորդներ։ 1175-ին նրա դեմ կազմակերպվեց մի դավադրություն։ Մլեհը սպանվեց դավադիր իշխանների կողմից Սսում[33], որը երկու տարի առաջ հենց ինքը դարձրել էր Ռուբինյան իշխանապետության մայրաքաղաք։

---

[30] Օտար աղբյուրները..., Իբն ալ-Ասիր, էջ 263։

[31] Al-Dahabi. Kitab duwal al-Islam. Damas, 1979. p. 148.

[32] C. Cahen. La Syrie du Nord..., p. 414. Հնարավոր է, որ եղած լինի երկու արշավանք, որոնցից վերոհիշյալը երկրորդն է, իսկ առաջինը (ըստ երևույթին 1172-ին ձեռնարկած) խաչակիրների համար հաջողությամբ է ավարտվում։ Մլեհը խոստանում է չդաշնակցել Նուր ալ-Դինին և ենթարկվել Երուսաղեմի թագավորին։ Բայց այդ «հնազանդությունը» տևում է ընդամենը մեկ տարի։ (The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Farag, tr... by Budge. Amsterdam, 1976, p. 288, S. Runciman. Op. cit., p. 320).

[33] Սմբատ Սպարապետ. Տարեգիրք. Փարիզ, 1859, էջ 102։

Կարծիք կա, որ Մլեհը և Նուր ալ-Դինը իրենց անուններով դրամ են կոտրել, բայց սա հավանաբար շփոթության արդյունք է[34]։

Մլեհին հաջորդած Ռուբեն III-ը (1175—1187), որը եղբոր՝ Ստեփանեի որդին էր, տեղեկացավ, թե ովքեր էին իր հորեղբոր սպանողները և մահապատժի ենթարկեց նրանց։ «Նա ևս առաւել այնոցիկ բարիս խոստանար որոց ձեռամբ սպանաւ հօրեղբայրն իւր՝ եթէ ծանիցէ զնոսա։ Եւ յարևան արք երկուք խաբեալք յիմարութեամբ, և ասեն՝ մեք սպանաք ձեռօք մերովք զնա յաղագս սիրոյ քո. և նա յոյժ շնորհակալ եղև նոցա. և ապա հրամայէ կապել վէմս ի պարանոց նոցա և ձգել ծածկաբար ի գետն, որոց էին անուանքն միոյն Զահան և միւսոյն Ապլղարիպ, որ էր ներքինի»[35]։

Սա չէր կարող միայն ազգականի վրեժխնդրություն լինել և. ըստ երևույթին, Մլեհի քաղաքականությունը Կիլիկիայում ուներ նաև իր կողմնակիցները։

Մլեհի հանդեպ հավատակիցների թշնամանքը հեշտ բացատրվում է միջնադարին բնորոշ կրոնական անհանդուրժողությամբ։ Մինչդեռ նրա բռնած դիրքը մի խելամիտ դիվանագիտական քայլ էր, որի իրավացիությունն ապացուցվեց հետագա իրադարձություններով։ Նուր ալ-Դինի հետ Մլեհի դաշինքի շնորհիվ Կիլիկիան չդարձավ մի վասալ իշխանություն (մանավանդ, որ նրա մահից հետո Զանգիների նախկին հողերը նվաճվեցին Եգիպտոսի Այյուբյան հզոր սուլթանի՝ Սալահ ալ-Դինի կողմից)։ Ավելին, ինչպես գրում է Իբն ալ-Ասիրը, «Մլեհին հաջորդող հայոց տիրակալը (ըստ երևույթին ի նկատի ունի Լևոն II-ին), մահմեդական երկրներից շատ քաղաքներ ու բերդեր գրավեց և դրանից մեծ չարիք ու հսկայական վնաս հասավ և այդ կորցրածը հնարավոր չէ ետ ստանալ»[36]։

Գտնվելով չորս պետությունների (Բյուզանդական կայսրության, Իկոնիայի սելջուկյան սուլթանության, Սիրիայի Զանգիների պետության, Երուսաղեմի խաչակիր թագավորության) շրջապատման մեջ, որոնք բոլորն էլ գերազանցում էին հայկական իշխանապետությանը իրենց ռազմական ուժով, Թորոս II և Մլեհ Ռուբինյանները կարողացան թե՛ զենքի ուժով և թե՛ դիվանագիտությամբ պահպանել իրենց դիրքերը բարդ քաղաքական իրադրության մեջ։

Այսպիսով, Արևելքում Նուր ալ-Դինի տիրապետության ժամանակաշրջանը (1146—1174) միաժամանակ Կիլիկիայի հայկական իշխանապետության վերականգնման, նրա հողերի ընդարձակման ու ամրապնդման մի կարևոր ժամանակաշրջան է, երբ դրվում էին հայոց ապագա ծաղկուն թագավորության հիմքերը։

---

34 Խոսքը վերաբերում է մի պղնձադրամի, որի վրա Մլեհի անունը չի հիշատակված։ Դրամի մի կողմում դրված է «Իշխանների թագավոր Մահմուդ», իսկ մյուս կողմում՝ «Արդար Նուր ալ-Դին» (V. Langlois. Numismatique de l'Armenie au moyen age. Paris, 1978, p. 35) Մ. Բրոսեն (Monographie des Monnais Armeniens, S-Petersbourg, 1839, p. 25) Հ. Ղ. Ալիշանը (Սիսուան, էջ 56) այս դրամը վերագրել են Մլեհին և Նուր ալ-Դինին։ Սակայն Վ. Լանգլուան գտնում է, որ հիշատակված մահմեդական իշխանավորը Ամիդ և Քայֆայի Արտուխյան ամիր Նուր ալ-Դին Մահմուդ Իբն Կարա Արսլանն է (1167—1185) և ոչ թե Սիրիայի տիրակալ Նուր ալ-Դին Մահմուդ Իբն Զանգին (1146—1174)։ Իսկ խաչ բռնած երկու մարդկանց պատկերները չեն կապվում Մլեհի հետ։ Դրանք Դալասենների բյուզանդական տոհմին պատկանող երկու անձինք են։ Այս դրամը Մլեհին չի վերագրում նաև դրամագետ Զ. Պտուկյանը (P. Z. Bedoukian. Coinage of Cilician Armenia. New York, 1962, p. 8, 67).

35 Սմբատ Սպարապետ. Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 192։

36 Օտար աղբյուրները..., Իբն ալ-Ասիր, էջ 362։

КИЛИКИЙСКАЯ АРМЕНИЯ И СИРИЯ В 40—70-х ГОДАХ XII ВЕКА

В. А. ТЕР-ГЕВОНДЯН

Резюме

В 40-х годах XII в. на Востоке произошли события, которые изменили соотношение сил двух противоборствующих сторон—крестоносцев и мусульман. Среди этих событий решающими были взятие Эдессы (1144) и не удавшийся второй крестовый поход (1147—1149). В результате большая часть Сирии (вместе с городами Алеппо и Дамаск), а также некоторые районы Верхней Месопотамии стали подвластны Нур ал-Дину Зенги (1146—1174), а крестоносцы были оттеснены дальше на запад.

В таком сложном политическом положении в Киликийской Армении была в 1145 г. восстановлена (после 8-летнего византийского господства) власть Рубенидов. Торос II (1145—1169) сумел не только восстановить армянское княжество, но и нанести поражение византийским войскам (1152). По мере усиления Нур ал-Дина стали образовываться военные союзы христианских государств, направленные против агрессивного эмира. Один из таких союзов между Византией, крестоносцами и Киликийской Арменией (1159) ни к чему не привел, а в 1164 г. в битве при Харриме объединенным силам византийцев, крестоносцев и армян Нур ал-Дин нанес тяжелое поражение.

Иной политики придерживался князь Млех, который после смерти своего брата Тороса захватил с помощью Нур ал-Дина власть в Киликии (1170—1175). Млех предпочел быть союзником мусульманского эмира, который в начале 70-х годов находился в апогее могущества. Армянские летописцы того времени описывают Млеха исключительно отрицательными чертами, что объясняется его союзом с соседними мусульманами, а также жесткой внутренней политикой. Однако сведения мусульманских историков показывают, что союз Млеха и Нур ал-Дина был взаимовыгоден. Если Нур ал-Дин с помощью этого союза обезопасил свои границы со стороны Византии, то Млех нанес поражение византийцам, освободив большую часть Равнинной Киликии вместе с тремя большими городами (Тарс, Адана и Маместия), а также успешно воевал против крестоносцев.

Таким образом, 40—70-е годы XII в.—период усиления государства Зенгидов в Сирии при Нур ал-Дине (1146—1174), но и период восстановления и укрепления армянского княжества Рубенидов. Торос II и Млех своими успешными войнами и разумной внешней политикой подготовили почву для создания Киликийского армянского царства в конце XII века.